

Հ. 7. ՍԵՊԵՏԵՄԲԵՐ

ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՍՑ ԱՄԻՐԴՈՎԼԱԹԻ

Միջնադարյան դեղագործական աշխատություններից լավագույններն են Ամիրդովլաթի «Ախրապատինը» և «Անգիտաց անպէտը»։ Վերջինս ճոխ է բովանդակած նյութերով։ Այդ աշխատությունը գրված է 1482 թվին։ «Ախրապատինը» պարունակում է դեղագործական պրեպարատներ, որ մենք անվանում ենք «Գալենիկ», իսկ «Անգիտաց անպէտը» դեղանյութերի մի ժողովածու է, ընդարձակ բացատրություններով։

Ամիրդովլաթն այս երկու արժեքավոր աշխատություններում առանձնապես ուշադրություն է դարձնում դեղաբույսերի տեսակների և նրանց օգտագործման վրա։ «Ախրապատին»-ի առաջաբանում նա գրում է. «Հինեցի զգրքս այս հանց գիրք, որ ով որ յատար լինի և կամ յաշեալ լինի, նա իրեն այս գիրքս հեքիք է և ով զենքն կարգայ և ուսնէ զամենայն գործն բժշկութեան և զմուֆրատաթ առնուլն, նա լինի կատարելութեամբ գէտ այս արուխտիս...»։ Այս խոսքերով նա կամենում է ասել, որ յատարը (համեմատաբար) և յաշեալը (բուսականաբար), որոնք ժամանակի դեղագործներն (ապտեկարներ) էին, պետք է լավ հմտանային իրենց մասնագիտության մեջ։

Արժեքավոր է Ամիրդովլաթի քննադատականը Մուսի Պրն Մայմունի գրքի մասին¹։ Ամիրդովլաթն ասում է. «Նա դեղերուն զօրութիւնը չէ գրել կատարելութեամբ և ոչ զընութիւնը և ոչ զգործքն. նա ես տեսա, որ Ախրապատինը առանց Մուֆրատաթի չի լինար, որ է մեկ մեկ դեղն, այն շինեցի, Ախրապատինն լմանն, զՄուֆրատաթն այլ...»։

¹ 1135—1204 թ. Եզդիստանի հրեա բժիշկ և փիլիսոփա, ի միջի այլոց գրել է շատ բժշկական գրքեր, նշանավոր է նրա գրած արաբերեն ընդարձակ ֆարմակոպեան։

Արաբերեն Մուֆրատաթը համապատասխանում է Դեղա-
 դիտությանը: Նա միացնում է բուն «Ախրապատինը» «Մուֆ-
 րատաթի» հետ և համեմատելով Մուսի Պին Մայմունի հետ, կի-
 բառում է նոր ուսուցողական մեթոդ և առաջադիմական քայլ
 է անում դեղագործական արվեստի մեջ: Նրա այդ մեթոդը որոշ
 չափով նմանում է ժամանակակից բժշկական ուսուցմանը, որը
 նպատակահարմար է համարում դեղագործներին օժտել բշկական
 գիտելիքներով, իսկ բժիշկներին՝ դեղագործական դիտելիքներով:
 Կ. Բասմաջյանի կազմած դեղանյութերի ցանկի պարունա-
 կության համեմատ «Անգլիտաց անպէտն» ունի առանց հոմա-
 նշերի 1100 անուն. դրանք են.

Անօրգանական կամ հանքային	75	անուն
Կենդանական	166	»
Բուսական	859	»

Ըստ որում 78⁰/₀-ը բուսական է: Ամիրդովլաթի հիշատակած
 859 անունը չպետք է բացարձակ ճշտություն համարել, որով-
 հետև զրբի հատվածների վերնագրերի մեջ հիշված բույսի անու-
 նից զատ՝ նա տեքստում մեջ է բերում համազոր և համասեռ
 բույսեր, չի տալիս նրանց անունները, այլ բավականանում է
 նրանց սոսկ նկարագրությամբ: Բերենք մի շարք օրինակներ.

Աֆիլմիլիֆ *Melilotus officinalis* հատվածի տեքստում դնում
 է նրա մի այլ տեսակը և նկարագրում այդ խոտաբույսը (մենք պար-
 զեցինք, որ դա *Melilotus coerulea*-ն է): Շատաճան (կանեփատ
Cannabis) հատվածում նշում է մի այլ կամեփատ, անվանելով
 այն «Լեռան կամեփ», մեր որոշմամբ սա էլ *Cannabis cretica*-ն
 է, արդի տերմինով *Datisca cannabina*, որն իսկապես իր ա-
 սածի պես սաստիկ փսխեցնող է: Օշման հատվածի գլխում Կ. Բաս-
 մաջյանը հետևելով իր ուղեցույց գրականության՝ օշմանը թարգ-
 մանում է *Soude*, այսինքն մեզ ծանոթ սոդան, մինչդեռ օշմանը
 բույս է *Gypsophylla* տեսակից: Շաճնաթ (Anchusa tinctoria)
 հատվածում նա նկարագրում է համազոր և համասեռ մի բույս
 Շունի մանր տերեւներ, բարակ ճղներ, կարմիր ծաղիկ և զերդ
 արին կարմիր արմատ, աւազուտ տեղեր կու բուսնի: Սա էլ ան-
 տարակույս հավաքիվա կոչված բույսի մեկ տեսակն եղող *Ec-
 hium rubrum*-ն է: Եվ այսպես «Անգլիտաց անպէտն»-ի մեջ կան
 բազմաթիվ բույսեր, որոնք դեռ չեն ցուցակադրված և ստուգ-
 ված:

«Ախրապատինն» ու «Անդիտաց անպէտն» ուսումնասիրելուց հետո անհրաժեշտ ենք համարում քննութեան առնելու մի քանի կարևոր հարցեր: Դրանք են՝ ինչպէս էին հավաքում բույսերը կամ պահպանում դեղանյութերը, ինչպէս էր ստուգվում բույսի ներգործութիւնը, բուժական հատկութիւնը, վերջապես ինչ ձևով երևի էին պատրաստվում և օգտագործվում այդ դեղանյութերը հիւսնդին:

Երջին դարում չկային ոչ բույսերի սիստեմատիկա, ոչ խոշորացուց և ոչ էլ ներկայումս հայտնի այլ միջոցներ: Այդ դարերում բույսի ինքնութիւնը կամ դեղանյութի որոշելու միջոցը դա բաղամաս փորձառութիւնն էր: «Անդիտաց անպէտ»-ում հեղինակը պատկերացնում է բույսի տեսքը, նկարագրում տերևի ձևը, ծաղիկը, արմատը, նրանց դուլնը, համը և հոտը: Ներքինն նա ցույց է տալիս իսկականն ու կեղծվածը տարբերելու եղանակը (իր բառով ասած «փորձը»), օրինակ, մեռուի բալասանի փորձը (տպագիր «Անդիտաց անպէտ»-ը № 3372): Այդտեղ կան շատ անհասկանալի բույսերի անուններ, բայց դրանք էլ բացարձակորեն անբացատրելի չեն, եթե ուշի ուշով քննութիւն առնվեն: Այս ուղղութեամբ Կ. Բառմաշյանը մեծ ծառայութիւն է մատուցել բժշկական մասնագիտութեանը, հրատարակելով Ամիրդովլաթի «Անդիտաց անպէտ»-ը կցելով նրան ընդարձակ բառացուցակներ, ինչպէս նաև ֆրանսերեն դեղանունները:

Անցնենք վերեն առաջադրված հարցերի քննութեանը: Ամիրդովլաթը մի ծառաբույսի կամ խոտաբույսի առանձին մասերի հավաքման և պահպանման վերաբերյալ ունի հատուկ ցուցմունքներ: Նա դեղագործներին հրահանգում է տերեւները հավաքել, նախքան բնական դուլնը փոխելը, ծաղիկը՝ երբ նոր բացվել է, և ոչ թափվելու օրերին, սերմերը՝ երբ ծաղիկը չորացել է, մեջը խնամվութիւն չի մնացել: արմատները՝ երբ օգային մասերը խնամվութիւն չի ստացել, երբ գունաթափ չեն եղել, պտուղը՝ չորանալու մոտ են, ցողունը՝ երբ գունաթափ չեն եղել, պտուղը՝ երբ կատարելապես հասել, բայց չեն այլափոխվել:

Խիժային նյութերի վերաբերյալ նա պատվիրում է վերցնել յուրաքանչյուր տեսակն իր ամբողջման ժամանակ: Էջատրակտիվ նյութերը (իր բառով ասած քամուքները), ինչպէս, օրինակ՝ ափիսն (opium), աղաղիան (Catechou), հազազի հյալքը

(lucium), սակամոնիում (scamonium), այն ժամանակ, երբ բույսը դեռ հյուսթալի է:

Դեղանյութերի պահպանման գործին նա նվիրում է հատուկ էջեր, որոնց մեջ պատվիրում է որոշ տեսակներ չորացնել սալներում, մյուսները պահել մի այլ նյութի հետ շիման մեջ դնելով, օրինակ՝ քափուրը պահել մի ամանում սև պղպեղի հետ, չաժիգաճը (Psyllium) ընկույղի հետ, սամիթը՝ նշի կճեպների հետ, պղպեղը՝ բազլայի հետ: Դեղաբույսերն ըստ տեսակի պիտի պահել քաթանե տոպրակների, փայտե արկղների, կամ կավե ամանների մեջ: Թանգարժեք և դուրալայլ նյութերը նա պատվիրում է դնել ապակյա սրվակների և արճճե տուփիկների մեջ: Բոլոր դեղանյութերն ընդհանրապես պետք է լինեն լավ փակված կամ կնքված մեղրամոմով:

Ամեն մի դեղանյութի համար նա սահմանում է նաև ունեցած բուժիչ գորուծյան ժամկետը, օրինակ, ծաղիկների համար նա ժամանակ է դնում մեկ տարի, տերևների և սերմերի համար՝ 2—4 տարի: Նրա կարծիքով երկար դիմացողների թվին են պատկանում կեղևայինները և փայտայինները:

Դեղանյութերի պահպանման համար նա որպես կանոն պահանջում է դեղերի հատուկ պահեստ, որը պետք է բարեխառն ջերմաստիճան ունենա, հեռու լինի խոնավությունից և ծխից: Վերջապես նա խորհուրդ է տալիս չկնքված ամանները հեռու պահել գիշահոտ նյութերից, ինչպես, օրինակ՝ վարդը, մանուշակը, նիլուֆարը հլթիսից (Asa foetida) կամ քափուրից, սուր դեղանյութերը, ինչպես, օրինակ, աֆիոնը՝ սակամոնիայից և այլն: Վերոհիշյալ կանոնները որոշ չափով նման են այն կանոններին, որոնք դեղագործական կոդեքսի համաձայն դեղատներում դասավորվում են հերոյիկ դեղորայքը A. B. C. կարգով:

Դեղանյութերի չափը (դոզա) և ներգործությունը որոշելու համար դիմել են զանազան միջոցառումների, որոնք հիմնված են եղել փորձի վրա: Սրբությամբ հարգվում կամ հիշատակվում էր հին վարպետների խոսքը: Մի «թրիակի» (Theriac) զորությունն ստուգելու համար նա հանձնարարում էր նախ շանը կերցնել և հետևանքը դիտել: Սուր (թունավոր) դեղերի չափը նա որոշում էր զգուշորեն և ահազանգելով ասում. «Աստուծոյ սիրուն չըխմեցես, հոգնայ (կլիզման Հ.Ս.) չանես, հիվանդը կըսպանես»:

Սուր դեղորայքի հին չափերը բավականաչափ տարբեր են այժմյան դեղագործական չափերից: Այստեղ մեջ ենք բերում այդ սուր դեղանյութերի հին ու նոր չափերի համեմատական տախտակը:

Գեղանյութի անունը	Ներքին գործածության օրական չափը հնում	Ներքին գործածության չափն ըստ այժմյան ֆարմակոլոգիայի
1	2	3
Ազոնիտոնի տերև Acoritum	Անթուլատերի ներքուստ	0,05 գրամ
Ազոկինիտի տերև Hyoscyamus	2 գրամ = 6,4 գր.	0,6 »
Աֆիոն Opium	1 կուտ = 0,2 »	0,2 »
Դանտի սերմ Croton tiglium	2 հատ. սերմ	2 կաթիլ յուղից
Թաթուլայի տերև Datura	1 տանկ = 0,9 »	1 գրամ
Ղաթիկոն Agaricum	3 գրամ = 9,6 »	2 »
Ճաղ դայե Nux vomica	Անթուլատերի ներքուստ	0, 3 »
Միլևուսի Scilla maritima	1 միլիալ = 2,4 գր.	1 »
Շալքարանի սերմը Conium maculatum	1,5 գրամ = 4,5 գր.	1 գրամ տերևը
Պեղանոս Ruta graveolens	3 գրամ = 9,6 գր.	1 »
Սօրնջան Colchicum bulb.	4 գրամ = 3 »	2 գրամ

Ներքին գործածության գծով դեղանյութերի հատկությունը (ընդունելությունը՝ ըստ Ամիրզուլայի) կարգավորելու համար հիմք էր ընդունվում նրանց օրգանոյեպատիկ հատկությունները, առանձնապես համը: Բնությունը բաժանվում էր 3 կարգի. ա (տափ, որ է կծու, ազիկ և դառն. բ) հով, որ է թթու, տախի, կապուղ. դ) մուգրատիլ-բարխառն, որ է յուղային, քաղցր և անհամ: Սրանցից տափը ըստ իր գործողության, բաժանվում էր 3 աստիճանի (իր խոտքով տաքացնա) բայց կա նաև միջակ տաք, որը բաժանվում է 4 աստիճանի: «Մուշթատիլը» համընկնում է մարդկային օրգանիզմի բարեկառնության հետ: Այս հանգամանքն Ամիրզուլայից բացատրում է հետևյալ կերպ. դեղանյութերը, առանձնապես թրեհները բաղադրել նյութերը խեղաթուրեն իրար խառնելով կտացվեն բարխառն բնություն և աստիճան ունեցողներ: Ժամանակակից բժշկականությունը այսպիսի դասավոր-

ըռեթյունը բնական և տրամաբանելի չի գտնում, զբա փոխարին հիմք է ընդունում էքսպերիմենտը: Ամիրդովլաթը նույնպես կասկածի տակ է առնում այդ բարդ և խրթին դասավորումը և չի վարանում համարձակորեն ասելու Քիմացիր, որ խիստ հաւատալ չը կայ:»

* * *

Նախքան Գալենիի պրիպարատներին անցնելը, հարմար ենք գտնում մի ակնարկ ձգել դեղագործության օժանդակ պարագաների (utensilia) և կռաչափերի վրա, որոնց վերաբերյալ թեև Ամիրդովլաթը հատուկ հատվածներ չունի, բայց տեղեւում նըրանց հիշատակումները մեզ տալիս են որոշ պատկերացում նըրանց մասին:

Զգայուն կշիռքների գործածությունը անհերքելի է թե Ամիրդովլաթի և թե նրանից առաջ հույն, լատին, արաբ, ասորի և հայ բժիշկների և ալքիմիկոսների մոտ: Դրանց մասին որոշ հիշատակություններ կան դեռևս Ամիրդովլաթից շատ առաջ (Հայ. պետ. Մատենադարան № 70—78 թ.) և հաստատվում են նյութական հուշարձաններով, ինչպես, օրինակ, կշիռքներով, քիմիական ամանեղեններով, որոնք հայտնաբերվել են պեղումների ժամանակ Անիի ավերակներում (Հայկական ՍՍՌ Պատմ. թանգարան):

Ամիրդովլաթի գրքերում հիշատակված են այլ անհրաժեշտ պարագաներ, ինչպես, օրինակ, քարե, պղնձե, փայտե սանդեր և ծեփներ, շատ նուրբ փոշի ոտանալու համար գործածվող «յկսանը» (իւ բառով), որը հավանորեն ոլորկ քար է, որ վրա սըղկվում էր փոշիացնելու նյութը: Մաղիլու համար գործ էր անվում դանազան նըրության մաղեր և գլխադիրներ. այս վերջինս հավանորեն պետք է լինի նուրբ հյուսվածք ունեցող կանանց զլխի մետաքսյա վարչամակը:

Կռաչարերը կամ կռաչափերը հատկապես ցուցակագրել է Ասար Սեբաստացին (1630 թ.), զրանք վերջերս ստուգվել են Կ. Բասմաջյանի և ակադ. Հ. Մանանդյանի կողմից: Մենք այստեղ կնշենք նրանցից միայն դեղագործականները և հիմք ընդունելով Ասարի տվյալները և արարական չափ ու կշիռները՝ կհամեմատենք հարյուրերորդական չափերի հետ:

Տրված չափերի ճշտությունը ստուգվում է այն փաստերով,

որ սկզբնական կշռաչափի համար հիմք է ընդունվել զարու հատիկի ծանրությունը, որը նկատի չառնելով 1—2 միլիգրամ ծանրության տարբերությունը, կշռում է 0,045 գրամ (45 միլիգրամ)։ Մի տանկը եթե ընդունենք 2 գարի, պիտի կշռի 0,09 գրամ, կուտը, որը խառնուկ (քեչի բույնուզի *ceratonia siliqua*) կորիզն է, կշռում է 0,18 գրամ։

Ասարի ցույց տված վերահիշյալ կշռաչափերը համապատասխանում են արարականին, հետևյալ տարբերություններով։ Դրամը ըստ Ասարի 2,94 գրամ է, կլոր հաշվով 6,5 գարի, արաբականը 3,3 գրամ է, կլոր հաշվով 7,5 գարի։ մթխալ (մսխալ) կոչված կշռաչափ 4,4 գրամ է թե ըստ Ասարի, և թե ըստ արաբականի։ Մենք չդիտենք այս երկու մոտավոր կշռաքարերից մը մեկը, ո՞ր դեպքում էր գործածական։ ըստ երևույթին պրակտիկայում դժվար էր կոտորակային հաշիվների դիմել, ուստի ավելի հեշտ էր մեկը կամ մյուսը ղենել կշեռքի նժարի մեջ, նշանակելով կշռաքարի անունը։ Շատ երկրներում, որտեղ դուրծ է անվել մթխալը, նրա կշիռը միանման չէ եղել, իսկ Ռուսաստանում նախքան զրամային սխեմային անցնելը՝ մթխալը (չոլոտնիկը) հաշվում էին ֆունտի ¹/₉₆-րդ մասը, այսինքն 4,2 գրամ, որը շատ մոտիկ է պատմական մթխալին։

Մինչև վերջերս զանազան զավտոներում հայ ժողովրդի մեջ լիտր և մուկի հասկացողությունն էլ տարբեր է եղել, մենք անօգուտ համարեցինք սրանց բացատրության վրա կանգ առնել։ Արաբների ու Ասար Սերաստացու տվյալների համեմատ հեղուկային և ոչ հեղուկային լիտրը հավասար է եղել 317,8 գրամի, իսկ զրամակշիռ նուկին 26, 48 գրամի։

* * *

Անցնենք այժմ Գալենիկ պրեպարատներին, բայց նախքան այդ, ստուգարանենք Ամիրդովլաթի մոտ տեղ-տեղ հիշվող «Սուզծու» տերմինը։ Սուզծուն բառացիորեն պիտի նշանակեր զուգված կամ միակցված, սակայն այս տերմինն ըստ Ամիրդովլաթի մի քիչ այլ իմաստ ունի։ Սուզծու դեղերը ներգործությամբ հայտնի, բաղադրությամբ անհայտ դեղեր են, որոնք պատրաստում էին ալքիմիկոսները կամ դեղագործությունից տեղյակ այլ մարդիկ և վաճառում էին, չարաշահելով նրանց հրաշակը։ Ուրեմն, այդ դեղորայքը կարելի է նմանեցնել այժմյան

պատենմտային կոչված պրեպարատներին: Այս կապակցութեամբ մեզ հետաքրքրում է «Անգլիաց անպէտ»-ի № 2621 և 2864 հատվածներում հիշատակված արարներն «Պուշի տաքայամոխ», իսկ հայերեն «Զատալ»¹ կոչված պրեպարատը, որն ըստ Ամիրզոյլաթի ցուցմունքի շափ» է (կոնաձև պրեպարատ) «Հայոց զայ», ինքը բույսից է: Նանույնպես նշում է, որ էս Բազին (արարութ. Razes, X դար) տեղյակ է եղել նրա մասին: Այստեղից պարզվում է, որ հայերն էլ ունեցել են Սուգծու դեղեր, որոնք արտահանում էին արևմտյան երկրները: Ի դեպ, նշենք այստեղ, որ Ամիրզոյլաթը հակառակ է եղել ծածուկ բժշկութեան, իր այս ազնիվ սկզբունքը նա այսպես է արտահայտում.—«Ինչ որ դժվար բան կայ հայ լեզուաւ պատմէ, զի որ կարգացողն զիւրութեամբ հասկանայ, ուսնողն զիւրութեամբ ուսանի և իսկի ծածուկ իրք չը մնայ և յայտնի»:

Նշենք այժմ պարզ և բաղադրյալ դեղաբայքը, սկսելով արտաքին գործածութեան համար եղածներէ: Սրանք կարող են լինել յուղային, կպչուն, ռետինային և խոլեսային:

Տիւմետը արաբերեն բառարանական բացատրութեամբ կատարված (припарка) է, բայց «Արաբական» դեղատոմսերի շինվածքին նայած՝ առասարակ արտաքին դրվածքներ են:

Սպեղանի բառը նույնպես կոնկրետ իմաստ չի տալիս, այնքան է հասկանալի, որ այս դեղերը գրվում էին վերքի կամ ցավցած մաւրմի վրա, ինչպես տիւմետն կամ մաւրմաւ: Մաւրմաւը պարզապես օժանելիք կամ յուղային քսուքն է (Unquentum). Պարզ օժանելիքը պատրաստվում է բուսական յուղի (ձեթի) մեջ հալեցնելով 20—25% մեղրամոմ, սա վեհիկուլում (vehiculum) էր բաղադրյալ մահլաճներին:

Զեթ, պարզ հասկացողութեամբ տվյալ պտղի կամ սերմի հեղուկ յուղն է, իսկ օբինակ՝ սնալուին ձէթը, մաւրմաւին ձէթը և այլն, դրանք տվյալ բույսի թրմոցներն են ձիթայուղի կամ նշի յուղի մեջ:

Քոնի կամ ջրուտ, աչքի ցավի համար սահմանված դեղեր են (collyrium), որոնք լինում են հեղուկ, յուղային, քոշի և չոր (վերջինս խաբելու համար է):

¹ Զատակի=Զատակի պարզաբանումը կարգալ մեր նախորդ հոդվածում (Աշխատ. հայ բժշկ. և բիոլոգ. պատմ. Սեկտորի. հատոր 1-ին, էջ 176, 1948 թ.):

Առօր կոչվածները կոնաձև պրեպարատներ են, նման այժմյան սուսպենդիաներին և բուժի կոչված դրանիկներին: Բայց դրանք անպայման յուզային չպետք է լինեն, չափերը դոբադրվում էին շատ տեսակ հիվանդությունների դեմ, կային նաև աչքի շափեր, դրսից քսելու կամ փոշիացնելով աչքի մեջ փչելու համար: Աչքի մեջ զգուշորեն դեղ ածելու համար դործադրվում էր մի բռնկի, որ կոչվում էր դեղդիր:

Առաջի փոշիներ պատրաստելու համար Ամիրդովլաթն ունի խեղացիորեն բաղադրած դեղատոմսեր, որոնք պատրաստվում էին բուսական, կենդանական և անօրգանական դեղանյութերով. բաղադրիչ նյութերն են սմպուլը (*Nardus indicus*), սումախը, քուպայա (*Cubeba*), գափրամը, աղբերաց արիւնը (*Sanguis draconis*), կրացրած եղջերվի կտուցները, մարջանը, քահրիպորը, տապաշիրը, մարմարի փռնի, շապի կամանին (*alumen*) և այլն:

Ներքին դործածությունյան պրեպարատներից այժմ պատմության դիրկն են անցել հետևյալները:

Ղուրսը, որն արաբերեն բառացի թարգմանություն նայելով շատերը հասկացել են տաբիտ, պաստիլա, ռուսերեն лепешка (դեղադորձական տերմինով trochisci), բայց Ղուրսերը միանգամից ուտելու համար չեն եղել, այլ դրանք վերցնում էին կռով և նորից փոշիացնելով տալիս էին հիվանդներին, կամ խառնում այլ պրեպարատների հետ, ինչպեսին էր, օրինակ՝ օձի մսի ղուրսը «Բեղեբուռն ուժը պահելու» հատվածում Ամիրդովլաթը պահպանման միջոցներից լավագույնն է համարում «դեղանյութերը ժողովելը, Ղուրսեր ջրները և չորացնելը»: Ղուրսի ձևով դեղերի դործածությունը պետք է ունենա հետևյալ առավելությունը, նախ՝ շնորհիվ չորացման, օրգանական նյութերը ապահովվում են փչանալուց, ապա՝ դեղեր պատրաստող բժիշկը կամ դեղագործը առնենում էր կռված և ստուգված մի բաղադրություն, վերջապես՝ շտապ դեպքերում նրանք մշտապես իրենց ձեռքի տակ ունենում էին գծվար հայթայթվող և հաղվազյուս դեղանյութը: Փորձը նրանց ցույց է տվել, որ կասկածելի Ղուրսերը անվթար պահպանելու համար, ինչպես, օրինակ՝ օձի Ղուրսը, պիտի օձվերին պալասանի ձեթով (*Opobalsamum*), որպեսզի առավել չափով ապահովվեն արտաքին և ներքին քայքայիչ ներդործություններից: Ղուրսերը պատրաստում էին հետևյալ ձևով. բաղադրիչ չոր նյութերը նախ փոշիացնում էին, ապա ավելացնում հեղուկ կամ փափուկ նյութեր, զապի խեժ, տաճիկ կռեղ (*Gummum arabicum*),

այս բոլորը տրորվում և մոտավորապես մեկական մթնաօրանոց տափակացրած մասերի բաժանվում և չորացվում էր:

Լեգեիֆթ շատ հին զալենիկ պրեպարատ էր, հույները, լատիները անվանում էին eclegmus, որից փոքր չափով հիվանդին տալու համար նրան լիզել էին տալիս: Ամիրդովլաթի գործածած լիզելիքները հեղուկ են և, ինչպես երևում է, ածուծ էին գդալի կտմ ուղղակի ափի մեջ և լիզել էին տալիս հիվանդին:

Օֆեմուպից, իրանական խոտ է, ճիշտ ուղղագրությամբ պետք է լինի Սիրֆե Գեջուրից, որը նշանակում է «Բացախամեղր» և համընկնում է որդի ֆարմակոպեայի քացախամեղրի հետ. պատրաստվում է քացախը մեղրի հետ եռացնելով մինչև սերույթի թանձրության հասնելը: Ամիրդովլաթի դեղատոմսով պատրաստվածը, որը նա անվանում է շարափ սքնճուրին, նույնն է, համեմված անանուխով, սակայն չոր դեղերը կուլ տալու կամ որպես զովացուցիչ ըստ ցանկության խմել հանձնարարված քացախամեղրը, հավանորին պիտի լինեն նույն հիմնական նյութերով պատրաստված ջրալի, թթվաշ, ախորժեկի բնական:

Շատ հին և ավելի հետաքրքիր պրեպարատ է քերիակը (theriac) ըստ Ամիրդովլաթի քերիակ, ուստի մենք փոքր ինչ ավելի երկար կանգ ենք առնում դրա վրա: «Ախրապատին»-ում հիշված են շատ տեսակ թերիակների անուններ և նրանց բաղադրիչ դեղատոմսերը, ինչպես, օրինակ՝ անտաքամտոսը (andromachia), Փլոնիայի ռոմի (Philonium romanum) առաջ թրիակը, (Theriac grandis) թրիակ Գալենի (Theriac Galeni) և այլն: Ըստ Ամիրդովլաթի սրանց մեջ ամենակատարելագործվածն է համարվել «քերիակ Մաքսիտիտոսը»: Ամիրդովլաթը հետևած լինելով արաբ կամ արաբագիր հեղինակներին աղավաղած տառադարձությամբ, անգլոտանում է, որ հիշված մաքսիտիտոսը, Mithridates-ն է: Այս հուշակավոր թերիակը պարունակում է 50 տեսակ դեղանյութեր, որոնցից շատ սուրերն (ակտիվները) են ափիսոս, մկնախը, մուշկը, սպիտակ Վրացի կմը, վայրի եղդակը, Ղարիկմը, Սորնջանը, պոմեի սերմը: Ոչ սուր դեղանյութերից մեկն է Երեսնեակ կոչված խոտարույսը, որը Դիոսկորիոս հանուն Նվապատը (թաղավոր) Միհրդատի անվանեց Eupatorium: Չոր նյութերը փոշիացնելուց և մաղելուց հետո տրորվում էին նախապես ձվի սպիտակուցով եփած և փրփուրը քաշված մեղրի հետ, որով ստացվում էր պինդ թխորակ մի մասնա, որից հետո կարող էին պատրաստել սիսեռի մեծության դեղահատեր, կամ

նույն շափով ուտել: Այդ թերիակը պահում էին ապիկած կալե ամանների մեջ: Հին դարերի բժիշկները կարծում էին, թե սրքան այդ թերիակը հնանա, այնքան էլ դորությունը կա- վելանա: Միհրդատյան թերիակի կամ արեմտյան բժիշկների theriac Mithridates-ի գլխավոր հատկութունն էր պահպանել անձը թունավորման զեպքերում կամ ընդդիմադրել թունավո- րումներին պարբերաբար, աստիճանաբար ավելացնելով ընդու- նելու զոդաները: Այդ թերիակին վերագրում էին բազմապիսի հատկութուններ, կարելի է ասել մի կատարյալ պանացեա կամ ունիվերսալ դեղ է:



Վերոհիշյալ ավյալները ցույց են տալիս, որ Հայաստանում բժշկական դիտելիքների հետ միաժամանակ բավականաչափ զարգացած է եղել դեղագործական արվեստը, հատկապես զեղա- բույսերի օգտագործման բնագավառում, օրինակ՝ բույսերի հա- վաքելը, պահպանելը, ներքին և արտաքին ձևերի և չափակչիո- ների սահմանումը, գործիական պարագաները և այլն:

Այս հարցում Ամիրդովլաթի արժանիքը կայանում է նրա- նում, որ նա ամփոփել և սխտեմի է վերածել ժամանակաշրջանի զեղագիտությունը:

А. О. СЕПЕТЧЯН

ЛЕКАРСТВОВЕДЕНИЕ В СРЕДНИЕ ВЕКА В АРМЕНИИ ПО АМИРДОВЛАТУ

В средневековой армянской медицинской литературе име- тся довольно много сведений по вопросам лекарствоведе- ния. Особое место в этом отношении занимают два капита- льных труда известного армянского врача XV века Амирдовлата под заглавиями «Ахрабадин», т. н. лекарствоведение и «Не- нужное для неучей», в которых Амирдовлат обобщает познания средневековых врачей в области лекарствоведения.

В предисловии к «Ахрабадину» Амирдовлат говорит, что труд этот составлен для работников аптечного дела — продав- цов ароматических средств и собирателей лекарственных трав. Этим работникам автор дает инструкцию о том, в какое время года надо производить сборы растений, их листьев, цветов, кор-

ней и др. частей, в каком помещении и в каких посудах следует их хранить для предохранения их от порчи и проч.

Среди перечисленных автором лекарственных веществ он останавливается на средствах для наружного и внутреннего употребления, для очищения воздуха, предохранения продуктов от порчи и проч. Лекарства, предназначенные для наружного употребления, применялись в виде катаплазмы, примочек, мазей, жидкостей, пластырей, масляных смесей, порошков для лечения глазных болезней и чистки зубов, палочек для прижигания ран и язв и проч. Средства для внутреннего употребления применялись в виде пилюль, таблеток, лепешек, настоев, отваров, сиропов, вареньев и проч.

Особое внимание Амирдовлат уделял сильно действующим лекарствам. Он приводит максимальные суточные дозы ряда сильно действующих лекарственных средств.

Весьма сложными препаратами являлись териакки, которых было много видов. В состав териakov входило несколько десятков лекарственных средств. Особой славой пользовался териак, автором которого считали Понтийского царя Митридата. В состав его входили свыше пятидесяти лекарственных средств. Тернак Митридата применялся в качестве противоядия и считался панацеей против всех болезней.

За единицу меры весов в средние века принимали вес ячменного зерна, равного 0,045 гр.

Приведенные Амирдовлатом данные показывают, что лекарствоведение в средние века в Армении достигло достаточного уровня развития.